ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ ՌԱՖԻԿԻ

ԱԽՏԱԾԻՆ ԴԵՐԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «ՈՒրարտու» համալսարանում:

Գիտական ղեկավար՝	հոգեբանական գիտությունների դոկտոր **Սեդրակ Աղասու ՍԵԴՐԱԿՅԱՆ**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	հոգեբանական գիտությունների դոկտոր **Նաիրա Ռաֆիկի ՀԱԿՈԲՅԱՆ**
	հոգեբանական գիտությունների թեկնածու **Գայանե Սիմոնի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
Առաջատար կազմակերպություն՝	Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ.-ի մարտի 7-ին՝ ժամը 12:00-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 06.02.2017թ.-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների դոկտոր՝ **Կ. Ե. Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ընտանիքը, որպես սոցիալական խումբ, իր խնդիրներով և զարգացման առանձնահատկություններով մշտապես գտնվել է հասարակագետների ուշադրության կենտրոնում: Հասարակության զարգացման ներկայիս արմատական փոփոխությունները և վերակառուցված կամ նորովի ձևավորված գործընթացներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում նաև ընտանիքի վրա, և վերջինիս առնչվող խնդիրները սկսում են էլ ավելի անհանգստացնել թե՛ բնագավառի մասնագետներին, թե՛ հասարակությանն ընդհանրապես: Պատմականորեն ձևավորված և ժամանակով ամրագրված խմբերի շրջանում ամենակայունը համարվել և համարվում է ընտանիքը, ուրեմն և հասարակական այդ կառույցի սոցիալ-դերային հետազոտությունն այսօր ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն, ինչն էլ իր հերթին ենթադրում է ընտանիքի դերային համակարգի ու կարգավիճակադերային փոխհարաբերությունների նոր և առավել հանգամանալից մոտեցումների ու հայեցակետերի մշակում: Ընտանիքն իր տեսակներով, գործառույթներով և դերային փոխհարաբերություններով յուրովի է նպաստում հասարակության դինամիկ զարգացմանը, սակայն միշտ չէ, որ ընտանիքի կառույցն ինքը կարողանում է զարգանալ ներդաշնակորեն, քանի որ այն անմասն չի մնում սոցիալ-տնտեսական տարաբնույթ գործոնների, սոցիալական խնդրահարույց փոխհարաբերությունների, սեռադերային բաշխման լարված վիճակների ներգործություններից: Ուստի ընտանիքը, որպես սոցիալ-հոգեբանական դինամիկ համակարգ, կարիք ունի նոր և խորացված հետազոտությունների՝ հիմքում ունենալով սոցիալական հոգեբանության, անձի հոգեբանության և հոգեբանության այլ ոլորտների նորանոր ձեռքբերումները, սոցիալ-հոգեբանական էական և մշտապես գործող մեխանիզմները երևան հանող մեթոդները, դրանց մշակումն ու կիրառումը:

Աշխատանքի գիտական նորույթը նշված հոգեբանական խնդիրների հետազոտությունն է՝ սոցիալ-դերային, մասնավորապես կարգավիճակադերային մոտեցման հետևողական կիրառման պայմաններում, որն ուղղված է աշխատանքի հիմնաքարը հանդիսացող ախտածին (պաթոգեն) – դեզադապտիվ դերային փոխհարաբերություն ների հետազոտման և ազդեցության ոլորտների, ինչպես նաև ընտանիքի՝ դրանից բխող խնդիրների, գործառույթների և հետագա փոխհարաբերությունների ուսումնասիրմանը: Հետագա ախտահարված փոխհարաբերությունների «հանգուցալուծումը» մենք դիտարկում ենք ընտանիքի փաստացի կամ էմոցիոնալ տրոհման, այն է՝ ամուսնալուծության հանգեցման տեսանկյունից: Սույն աշխատանքում հենց այս՝ ախտածին դերային փոխհարաբերություններով պայմանավորված բախումնածին ընտանեկան մեխանիզմներն ու գործառույթներն են համարվում ամենաարդիականներից մեկը ընտանեկան խմբերն ուսումնասիրող գիտության մեջ: Ելնելով վերոգրյալից՝ մեր կողմից կազմակերպվել և անցկացվել են ներընտանեկան փոխհարաբերությունների դինամիկայի մեթոդաբանական, տեսական և

փորձարարական հետազոտություններ:

Սույն աշխատանքում դերային, մասնավորապես ախտածին դերային մոտեցումը համալրվում է վարկածով, ենթավարկածներով, որով, ըստ էության սկիզբ է դրվում ընտանիքի հետազոտման նոր՝ ախտածին սոցիալ-հոգեբանական ուղղության ներկայացման համար:

Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Քանի որ դերերի և գործունեության տեսությունները արդեն վաղուց մշակված են նախորդ հետազոտողների կողմից, ուստի շեշտը դրվել է այդ երկու տեսությունների համադրման և իրական կյանքում դրանց բազմակողմանի դիտարկման վրա՝ սկսած ընտանիքի սոցիալ-հոգեբանական բնութագրից, գործառույթներից, դերերի ծագման, բախման և հարմարման մեխանիզմներից մինչև ապագա ամուսինների նախամուսնական շփումը, դերային, միջդերային ակնկալիքները, սպասումները (էքսպեկտացիաներ), վերջիններիս ախտածին դրսևորումները և, արդյունքում, նրանց ընտանիքի գոյության ավարտը՝ ամուսնալուծությունը: Սոցիալական դերերի մասին հիմնական պատկերացումների առաջին ստեղծողները (Տ. Սարբին [93], Ռ. Լինտոն [90], Ջ. Գ. Միդ [91], Ա. Մ. Ռոշեբլավ-Սպենլե, Մ. Միդ [55] և ուրիշներ) համոզված էին, որ դերերի տեսությունն այն առանցքային կողմերից մեկն է, որը կարելի է կիրառել ընտանիքի հետազոտության ոլորտում, քանի որ հենց այդ դերերի աններդաշնակությունն է հանգեցնում ընտանիքի տրոհմանը:

Ընտանեկան հոգեբանության մեջ ընտանիքի դերային ամբողջական կառուցվածքի (այդ թվում և ախտաբանական, ախտածին դերերի) մասին գաղափարները սկսել են հանդես գալ այն հեղինակների աշխատություններում, ովքեր մասնագիտացված էին սոցիոլոգիայի և ընտանիքի սոցիալական հոգեբանության ոլորտներում (արտասահմանյան հետազոտողներից՝ Ն. Սմելզեր [73], Է. Բերն, Մ. Բոուեն [87], Կ. Վիտակեր [31], Մ. Ջեյմս, Կ. Իմելինսկի [46], Գ. Կրայգ [51], Ս. Կրատոխվիլ [50], Ս. Մինուխին [56], Մ. Նիկոլս, Ռ. Ռիչարդսոն, Վ. Սատիր [70], Ռ. Սկիններ, Ջ. Հեյլի [80], Է. Էրիքսոն [85], ռուսաստանյան և նախկին ԽՍՀՄ հետազոտողներից՝Լ. Յա. Գոզման [33], Է. Ե. Ալյոշինա [24], Տ. Վ. Անդրեևա [26], Ն. Ն. Օբոզով [61], Ռ. Վ. Օվչարովա, Ս. Ի. Գոլոդ [35], Ի. Ս. Կոն [52], Ի. Ի. Լունին, Օ. Ա. Կարաբանովա [48], Ի. Վ. Դորնո [37], Մ. Ա. Մազմանյան, Ս. Ա. Սեդրակյան [20], Ա.Ա. Նալչաջյան [17], Ն. Ի. Օլիֆիրովիչ [65], Ե. Տ. Սոկոլովա, Է. Թիյտ [79], Վ. Վ. Ստոլին [75], Ն. Վ. Տոիլինա, Վ. Ա. Սիսենկո [78], Գ. Գ. Ֆիլիպովա, Ի. Վոլկովա [32] և ուրիշներ):

Մեր աշխատանքի համար, մասնավորապես, կոնցեպտուալ հիմք են հանդիսացել Ս. Ա. Սեդրակյանի՝ ընտանիքի դերային կառուցվածքի վերաբերյալ բազմաբնույթ հետազոտությունները (1997, 2008, 2010), Օ. Ա. Կարաբանովայի՝ ոչ նորմատիվ ընտանեկան ճգնաժամերի տեսությունը (2008), Ռ. Ռայգորոդսկու խմբագրությամբ հրատարակված ընտանեկան կոնֆլիկտները նկարագրող և համակարգող աշխատությունների համակազմը (2002, 2003, 2004): Սակայն վերոգրյալ հեղինակներն իրենց առջև նպատակ չէին դրել քննարկելու և, ընդսմին, հետազոտելու հատկապես ախտածին դերերն իրենց ամբողջա-

կանության և ազդեցության լայն ոլորտների շրջանակներում, մի հանգամանք, որը հիմնավորում է մեր աշխատանքի ընտրությունը: Մենք փորձել ենք հանգամանալից կերպով քննարկել մասնավորապես ախտածին դերերն իրենց առաջացման, դրսևորման և, ըստ այդմ էլ, կործանարար ազդեցության շրջանակներում, քանի որ ընտանիքներում տիրող բախումնային, լարված փոխհարաբերությունների մեծ մասի հիմքում, ըստ մեր հետազոտությունների և ըստ համարժեք վերլուծությունների, ընկած են ախտածին դերերը, ախտահարված փոխհարաբերությունները: Ելնելով վերոնշյալից՝ կարելի է փաստել, որ առաջադրված թեման համալիր է և ունի միջգիտական ուղղվածություն, որը հիմնականում առնչվում և ուսումնասիրվում է՝

ա) հոգեբանության տարբեր բնագավառներում՝ սոցիալական, մանկավարժական, կլինիկական

բ) հարակից գիտություններում՝ սոցիոլոգիա, հոգեբուժություն, հոգեախտաբանություն, հոգեֆիզիոլոգիա:

Հետազոտության օբյեկտ են ընտանիքի սոցիալ-դերային փոխհարաբերությունների կառուցվածքը և դինամիկան, ախտածին դերային փոխհարաբերությունները, ընտանեկան կոնֆլիկտները, ամուսնալուծությունները:

Հետազոտության առարկա են ընտանեկան դերերի և կարգավիճակադերային համակարգի փոխադարձ կապը, ընտանիքի անդամների փոխադարձ սպասումների մեխանիզմները, կոնֆլիկտային իրավիճակները, ճգնաժամերը:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել ընտանեկան դերային փոխհարաբերությունների բախումնային, մասնավորապես ախտածին դերային փոխհարաբերությունների քայքայիչ, կործանարար ազդեցությունը ընտանիքի վրա, այդ ազդեցությունը նվազեցնելու կամ հաղթահարելու ուղղությամբ համապատասխան ուղիներ մշակելու նպատակով կանխատեսել դրա սոցիալ-հոգեբանական մեխանիզմների հետագա դինամիկան:

Վարկածի հետազոտման նպատակով առաջադրել ենք մի շարք **խնդիրներ՝**

1. Ընտանիքի տեսական և գործնական հետազոտությունների արդյունքների ուսումնասիրության հիման վրա, դերերի տեսության կիրառմամբ, ներկայացնել արդի բջջային ընտանիքի կառուցվածքը, գործառույթները և դինամիկան, նկարագրել դերային ախտածին դրսևորումները, որպես ամուսնալուծության՝ ընտանիքի քայքայման պատճառ:

2. Համակարգել դերային յուրօրինակ՝ ախտածին հիմքով առաջացած բախումները, վերջիններիս դրսևորման առանձնահատկությունները և լուծման հնարավոր եղանակները: Այդ նպատակով կիրառել զրույցի, դիտման, հարցման, թեստավորման և սոցիալ-հոգեբանական այլ մեթոդներ, ինչպես նաև կատարել հոգեբանական գիտության մեջ կուտակված փորձարարական նյութերի տեսամեթոդաբանական վերլուծություն:

3. Հետազոտել ամուսնալուծության հիմնական պատճառները և առաջացման մեխանիզմները, մասնավորապես ամուսնալուծությունը դիտարկել ախտածին- դեզադապտիվ դերերի ճնշման տեսանկյունից:

4. Վեր հանել այն մեխանիզմները, որոնց արդյունքում նոր դերային փոխհարաբերությունները կրում են ադապտիվ (նորմալ) և դեզադապտիվ (ախտածին) բնույթ:

Հետազոտության գլխավոր վարկածն է:

Ենթադրվում է, որ յուրաքանչյուր ստեղծվող ընտանիք կարգավիճակների և դերերի համակարգ է, որի սպասումները (էքսպեկտացիաները) փոխկապակցված են, և վերջիններիս չարդարացվելու կամ մասնակիորեն արդարացվելու պարագայում կարող են դրսևորվել նոր՝ ախտածին-դեզադապտիվ դերեր, որոնք փոխում են ընտանիքի կառույցը, քայքայում այն:

Տեսական և գործնական նշանակությունն այն է, որ ընտանիքի հոգեբանական հետազոտությունները, մասնավորապես, ընտանիքի տրոհման (ամուսնալուծության) հիմնական պատճառների հետազոտությունները համակարգված ձևով քննարկվում են սոցիալ-դերային (ախտածին դերերով պայմանավորված) տեսանկյունից, որտեղ ընտանեկան դերերի իրականացումը կամ վերջիններիս իրականացման անկարողությունը դիտվում է որպես ընտանիքի գործունեության կարևորագույն բաղադրիչ: Այս բնագավառում կատարված հետազոտությունները թույլ են տալիս նորովի լուսաբանել ժամանակակից ընտանիքների առջև ծառացած հիմնախնդիրները և լայն հեռանկար է բացում ընտանիքի հոգեբանության տեսական և գործնական բազմաթիվ հետազոտությունների համար:

Հետազոտության մեթոդները և համակազմը: Հետազոտությունը կատարվել է համակարգված մի շարք մեթոդների (դիտում, զրույց, թեստերի մեթոդ, հետազոտության արդյունքների մաթեմատիկական վերլուծություն) համադրման եղանակով: Կիրառվել են նաև մի շարք հեղինակների առաջարկած մեթոդիկաներ (Վ. Վ. Ստոլին՝ «Ամուսնությամբ բավարարվածության հարցարան» [74], Կ. Թոմաս՝ «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման մեթոդիկա» [5], Ա. Ն. Վոլկովա՝ «Դերային սպասումներ և հավակնություններ (մեթոդիկա)» [32], Ռ. Բեռնս և Ն. Կաուֆման՝ «Ընտանիքի կինետիկ պատկերը» (թեստ) [5], «Հետազոտվողի միջանձնային հարաբերությունների ախտորոշումը անավարտ նախադասությունների միջոցով» (մեթոդիկա) [5]):

Ստացված արդյունքների հավաստիությունն ապահովվել է հիմնախնդրի վերաբերյալ նպատակին համապատասխանող մեթոդների ընտրությամբ, հետազոտության տվյալների մշակման և վերլուծության մաթեմատիկական վիճակագրական մեթոդներով:

Ընդհանուր առմամբ հետազոտությանը մասնակցել է 150 ընտանիք, որոնք դասակարգվել են փաստացի կամ զգայական ամուսնալուծության փուլում գտնվող և առողջ ընտանիքների խմբերով: Մասնակցել են նաև այդ ընտնիքների անդամ ներկայացնող 140 աշակերտներ, ովքեր սովորում են հանրակրթական չորս (որից մեկը՝ հիմնական) դպրոցներում՝ հիմնականում 7-12-րդ դասարաններում: Փաստենք, որ վերոգրյալ ընտանիքներն ընտրել և հետազոտել ենք բազմագործոն և բազմատիրույթ դերային մոտեցման

սկզբունքով, այսինքն՝ հետազոտել ենք թե՛ այնպիսի ընտանիքներ, որոնք ունեին կրթական մակարդակի բարձր շեմ (հիշյալ դպրոցներում աշխատող ուսուցիչներ), թե՛ այնպիսի ընտանիքներ, որոնք չունեին բարձրագույն կրթություն, թե՛ այնպիսի ընտանիքներ, որտեղ «նախկին» ամուսիններից կրթություն ստացել էր մեկը: Երեխաների ներգրավվածությունը հետազոտություններին ևս բացատրվում էր դերային, մասնավորապես կարգավիճակա-դերային համակարգի դինամիկ զարգացման սկզբունքով, այսինքն՝ նպատակամղված էր վերլուծելու նրանցում երևան եկած վարքագծային այն փոփոխությունները, որոնք հետևանք էին ընտանիքում առկա խնդիրների, բախումների, ճգնաժամերի և, ի վերջո, ամուսնալուծությունների:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Ընտանեկան բարդ փոխհարաբերություններում դրսևորվող ախտածին-դեզադապտատիվ դերերը հիմնականում առաջանում և դրսևորվում են դերային լարված փոխհարաբերությունների, չարդարացված սպասումների և բախումների արդյունքում՝ հանգեցնելով հարաբերությունների խորը ճգնաժամի, ընդհուպ՝ ամուսնալուծության: Ամուսնալուծությունը դիտարկում ենք որպես հարաբերությունների փաստացի կամ զգայական /էմոցիոնալ/ տրոհում:

2. Ընտանեկան փոխհարաբերությունների անմիջական ոլորտում մարդիկ պատկերացումներ են ձեռք բերում հիմնական սոցիալական դերերի և գործընթացների՝ համագործակցության և մրցակցության մասին: Ներընտանեկան դերերի բաշխումը որպես կանոն ընթանում է սահուն, նորմալ և ադեկվատ, իսկ որոշ ընտանիքներում դրսևորվում են դերային լարված փոխհարաբերություններ, սեփական դերի «գերազանցություն», ընտանիքում միանձնյա լիդերի և այլ, ոչ ադեկվատ հարաբերություններ, որոնք դերերի ախտահարման, բախման և ախտածին-դեզադապտիվ դերերի առաջացման պատճառ են դառնում:

3. Ընտանեկան ճգնաժամային փոխհարաբերություններում առաջացող ախտածին- դեզադապտիվ դերերը երևան գալով ընտանիքի մեկ կամ մի քանի անդամների վարքագծում, սկսում են աստիճանաբար ներգործել մյուսների վարքի վրա և քայքայել, կազմալուծել ընտանիքը ներսից: Այս պարագայում ուշադրության է արժանի հատկապես այն, որ դերերի ախտածինությամբ պայմանավորված, լարված ճգնաժամային փոխհարաբերությունները պատճառ են դառնում երեխաների կարգավիճակադերային վարքականոնների խեղման, ծնողների, շրջապատի հետ փոխհարաբերությունների վատթարացման: Նման երեխաներից շատերը կորցնում են հետագայում նորմալ ընտանիք կազմելու կամ ամուսնական փոխհարաբերություններում հարմարվելու ունակությունը

Ատենախոսության **մեթոդաբանական և տեսական հիմք են** նախկին խորհրդային միության մեջ մշակված գործունեության տեսությունը (Ա.Ն. Լեոնտև, Բ.Գ. Անանև, Ա.Գ. Ասմոլով, Վ.Ն. Դրուժինին, Ի.Ս.Կոնը և ուիշներ) և արտասահմանյան գիտնականների կողմից մշակված դերերի տեսությունը (Բ. Բիդդլ, Գ. Գլումեր, Ռ. Լինտոն, Ռ. Մերտոն, Ջ. Հ. Միդ, Տ. Շիբուտանի, Տ. Սարբին, Է. Էրիքսոն և ուրիշներ): Ընտանեկան հոգեբանության և

մասնավորապես ընտանեկան դերերի և կոնֆլիկտների հետազոտման համար նախադրյալ են հանդիսացել այն հեղինակների աշխատությունները, որոնք իրենց առջև ծառացած խնդիրների լուծման ժամանակ կիրառել են դերային փոխհարաբերությունների, մասնավորապես ընտանեկան կոնֆլիկտների, ճգնաժամերի, ախտահարված ընտանիքների, ամուսնալուծությունների և դրանց հետևանքների, ինչպես նաև միայնության և այլ գործունեության մոդելը (Ս. Ա. Սեդրակյան [20, 22, 71, 72], Օ. Ա. Կարաբանովա [48], Է. Գ. Էյդեմիլլեր, Վ. Վ. Յուստիցկիս [84], Ս. Խուդոյան [81], Ն. Հարությունյան [15], Հռ. Պետրոսյան [19], Ն. Ի. Օլիֆիրովիչ [65], Դ. Յա. Ռայգորոդսկի և համահեղինակներ [67]): Մեր հետազոտությունների հիմքում այն հիմանական դրույթն է, ըստ որի, հասարակության մեջ յուրաքանչյուր մարդու դերը մարդկային կերպի և գործունեության կարևոր և յուրահատուկ ձև է: Դա այնպիսի սոցիալ-հոգեբանական կազմավորում է, որն ունի յուրօրինակ կառուցվածք և գործառույթներ, որոնք իրագործվում են փոխլրացված կերպով՝ շրջապատողների դերերի կատարման համատեքստում: Հետազոտական աշխատանքի հիմնական դրույթները զեկուցումների և քննարկումների տեսքով ***ներդրվել են*** Արմավիրի մարզի Նորակերտի, Մուսալեռի, Ծաղկալանջի միջնակարգ և Փարաքարի հիմնական դպրոցների մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի նիստերում, «Ուրարտու» համալսարանի հոգեբանության ամբիոնի ամենամսյա տեսական սեմինարներում, Էջմիածին քաղաքի կանանց խորհրդի համաժողովներում, Երևան քաղաքի թիվ 2 հատուկ/օժանդակ դպրոցի մանկավարժական և ծնողական խորհրդի նիստերում: ***Հետազոտության փվյալները*** կարող են կիրառվել ընտանիքի հոգեբանությամբ և հոգեթերապիայով զբաղվող մասնագետների ուսումնասիրություններում, սոցիալ-հոգեբանական խորհրդատվական կենտրոններում, բուհական համապատասխան դասընթացներում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գործնական առաջարկներից, գրականության ցանկից [96 անուն]: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 144 էջ, որտեղ ներառված են 5 գծապատկեր, 2 նկար, 11 աղյուսակ: Ատենախոսությանը կցված է նաև 5 հավելված (14 էջ):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին գլուխը **«Ընտանեկան ախտածին դերերի ազդեցությունը ներընտանեկան հարաբերությունների վրա, հիմնախնդրի սոցիալ-հոգեբանական մեկնաբանություններ»**, նվիրված է ընտանիքի հետազոտման արդիական խնդիրների, մասնավորապես, ընտանիքի և ընտանեկան փոխհարաբերությունների տիրույթում ախտածին դերերի առաջացման, մեխանիզմների վերլուծության, ամուսնալուծությունների վրա էական ազդեցության, ինչպես նաև դերերի և կարծրատիպերի վերլուծությանը:

Հիմնվելով սոցիալական հոգեբանության ժամանակակից ձեռքբերումներին, նկարագրված են սոցիալական դերերի, կարգավիճակների, միջանձնային դերային փոխհարաբերությունների վերլուծությունները, պաշտանական և միջանձնային կամ ոչ պաշտոնական դերերը, այդ համատեքստից բխող ախտածին-պաթոգեն դերերի վերաբերյալ բազմաբնույթ հետազոտությունները: Առաջին գլխի հետագա ենթավերնագրերում (1.1, 1.1.2, 1.2, 1.3) դիտարկվում և հանգամանալից քննարկվում են ընտանիքի սոցիալ-հոգեբանական բնութագիրը, ընտանիքի ծագման, տեսակների և առանձնահատկությունների, զարգացման օրինաչափությունների և դինամիկայի ուսումնասիրությունները, ամուսնության և ընտանիքի դերն ու նշանակությունը, ընտանեկան կարգավիճակներն ու դերերը, դերերի ծագումը, վերջիններից բխող բախումների և հարմարման մեխանիզմների վերաբերյալ հետազոտությունները: Առաջին գլխի 1.2 ենթագլխում՝ «Ներընտանեկան դերային բախում. ախտածին դերերի և ճգնաժամերի դրսևորման փուլերն ընտանիքում» մանրամասն նկարագրված են ընտանեկան փոխհարաբերություններում տիրող բախումնա-ծին և ճգնաժամային փոխհարա բերությունները, ճգնաժամերի դրսևորման փուլերն ու ազդեցությունը ընտանեկան դերային փոխհարաբերություններում, իսկ 1.3 ենթագլխում՝ «Ընտանեկան ախտածին դերեր. ծագումը, էությունը, առանձնահատկությունները, ախտածինության դրսևորումը որպես ամուսնալուծության պատճառ» վերլուծված է ախտածին-պաթոգեն դերերի դրսևորման և առաջացման մեխանիզմները, ընտանեկան կառույցի վրա թողած քայքայիչ ազդեցության հետևանքները: Այս ենթագլխում (1.3) շարադրված են Ֆ. Բարկերի և Հ. Ռիխտերի, Մ. Բոուենի, Է. Էյդեմիլլերի և Վ. Յուստիցկիսի, Ս.Ա. Սեդրակյանի և այլ հեղինակների հետազոտություններն ու համարժեք վերլուծությունները վերոգրյալ հիմնախնդիրների վերաբերյալ, ինչպես նաև կատարվել է համարժեք ուսումնասիրություններ և եզրահանգումներ:

Երկրորդ գլուխը՝ **«Ամուսնալուծության հիմնական պատճառները. ամուսնալուծության ռիսկեր և դրանց առաջացման մեխանիզմները»** նվիրված է ամուսնալուծությունների առաջացման հիմնական պատճառների, ամուսնալուծու թյան ռիսկերի և առաջացման մեխանիզմների հետազոտմանը, մասնավորապես, վերջիններիս առաջացման վրա ախտածին-պաթոգեն դերերի ազդեցության ուսումնասիրմանը: Այս գլխում շարադրվում են ամուսնալուծության գործընթացին նպաստող գործոնները (Է. Թիյտ), ամուսնալուծության առաջացման պատճառները (Լ. Ռժանեցկայա, Վ. Արխանգելսկի), ամուսնալուծությանը նպաստող գործոնները (Է. Թիյտ), ինչպես նաև հետամուսնալուծական շրջափուլերի վերլուծությունները: Երկրորդ գլխի հետագա ենթավերնագրերում (2.1, 2.2, 2.3, 2.3.1,) մանրամասն նկարագրված է ամուսնալուծությունը որպես ախտածին դերերի հետևանք, ախտածին դերերի քայքայիչ բնույթը և ամուսնալուծության հետևանքները, միջխմբային ծագման ախտածին դերերը և ամուսնալուծությունները, ներընտանեկան ծագման ախտածին դերերը և ամուսնալուծությունները: Երկրորդ գլխի 2.2 ենթավերնագիրը՝ «Անբարենպաստ ընտանիքը որպես երեխայի սոցիալ-

հոգեբանական առողջ զարգացմանը խոչընդոտող պատճառ, վարքի ռիսկայնության նախապայման» հետազոտում է ծնողների ամուսնալուծության բացասական ազդեցության հետևանքները երեխաների վրա, որոնք, որպես կանոն խորն ու երկարատև են լինում: Հետագա ենթագլուխները(2.3, 2.3.1) նվիրված են ամուսնալուծության և ծնողների, հարազատների, շրջապատի վերաբերմունքի հետազոտություններին և վերլուծություններին, կնոջ, տղամարդու, երեխաների և շրջապատի հետագա, մեր կարծիքով ախտահարված փոխհարաբերությունների դրսևորումներին:

Երրորդ՝ **«Ներընտանեկան հարաբերությունների վրա ախտածին դերերի ունեցած ազդեցության փորձարարական հետազոտություններ»** գլխում հետազոտվել են ընտանիքում և ամուսնական փոխհարաբերություններում դրսևորվող ախտածին դերերի և վերջիններիս ազդեցությամբ ամուսնալուծությունների «ուղին բռնած» ընտանիքները և երեխաները, որտեղ տեսական շարադրանքի հիմնական դրույթները հիմնավորվում են մի շարք մեթոդների կիրառմամբ՝ փորձարարական հետազոտությունների միջոցով ստացված արդյունքներով: Այսպես «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկան թույլ է տալիս որոշել ամուսինների պատկերացումները ընտանեկան դերերի բաշխման վերաբերյալ: Ընտանեկան գործառույթների իրականացման ժամանակ ամուսնու և կնոջ դերերի բաշխման վերաբերյալ պատկերացումները ամփոփված են դերային սպասումների և հավակնությունների սանդղակում: Ամուսնական փոխհարա բերություններն ըստ մեթոդիկայի հեղինակի(Ա.Ն. Վոլկովա) մեծամասամբ կախված են ամուսնու և կնոջ՝ ընտանեկան արժեքների և դերային փոխհարաբերությունների մասին ունեցած պատկերացումներից և փոխհամաձայնության գալու ընկալունակության աստիճանից: Զույգերի դերային ադեկվատ (նորմալ) վարքագիծը մեծամասամբ կախված է դերային սպասումների համարժեքության (կնոջ և տղամարդու՝ զուգընկերոջ պարտականությունների կատարման աստիճանի վերլուծման դիրքորոշումների հանրագումարը) դրսևորումներից և ամուսինների դերային կապվածությունիցո (զուգընկերներից յուրաքանչյուրի՝ ընտանեկան դերերի կատարման պարտականությունը): Աղյուսակների տեսքով ներկայացված են հետազոտված ընտանիքներում ամուսինների սպասումների և հավակնությունների համեմատական վերլուծությունը հետևյալ հինգ ոլորտներում. տնտեսա-կենցաղային, ծնողական-դաստիարակչական, սոցիալական ակտիվության, հոգեթերապևտիկ, արտաքին գրավչության: Ընտանեկան գործառույթների իրագործման ժամանակ անձի կողմնորոշումը զուգընկերոջ ակտիվ դերային վարքի նկատմամբ «դերային սպասումներ» են և անձի կողմնորոշումը սեփական դերային վարքի նկատմամբ՝ «դերային հավակնություններ»: Մեթոդիկայի գործարկմանը ընդհանուր առմամբ մասնակցել են 170 իգական և 130 արական սեռի ներկայացուցիչներ, իսկ ընդհանուր քանակական վերլուծություններն ամփոփվել են աղյուսակների և գծապատկերների տեսքով, տրվել են համարժեք վերլուծություններ, կայացվել են թե՛ ամուսնալուծված կանանց և տղամարդկանց, թե՝ ամուսնությունը պահպանած ընտանիքների համեմատական վերլուծությունները:

Աղյուսակ 1

Ամուսնալուծված կանանց դերային սպասումների և հավակնությունների քանակական ցուցանիշներն ըստ ընտանեկան արժեքների սանդղակի

ԴԵՐԱՅԻՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**քանակ**	**միավոր**
Սոցիալական ակտիվություն	15	5-7
Հուզական-հոգեթերապևտիկ	40	8-9
Տնտեսակենցաղային	35	6-7
Արտաքին գրավչություն	20	3
Ծնողական-դաստիարակչական	10	3-5
Ընդամենը	120	-

Աղյուսակ 2

Ամուսնալուծված տղամարդկանց դերային սպասումների և հավակնությունների քանակական ցուցանիշներն ըստ ընտանեկան արժեքների սանդղակի

ԴԵՐԱՅԻՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**քանակ**	**միավոր**
Սոցիալական ակտիվություն	7	3-4
Հուզական-հոգեթերապևտիկ	19	7
Տնտեսակենցաղային	25	7-9
Արտաքին գրավչություն	4	7-9
Ծնողական-դաստիարակչական	25	8-9
Ընդամենը	80	-

«Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկայի օգնությամբ փորձ է արվել (հանրագումարի բերելով վերոգրյալը) որոշել ամուսնալուծված ընտանիքներում միջանձնային փոխհարաբերությունների հինգ ոլորտներում ամուսնական զույգերի դերային համապատասխանության աստիճանը: Ամուսնու դերային համապատասխանությունը հավասար է կնոջ դերային հավակնությունների գնահատականի և ամուսնու դերային սպասումների գնահատականի տարբերությանը: Համապատասխանաբար՝ կնոջ դերային համարժեքությունը հավասար կլինի միավորների այն տարբերությանը, որը բնութագրում է ամուսնու դերային հավակնությունները և կնոջ դերային սպասումները: Որքան փոքր է տարբերությունը, այնքան բարձր է զուգընկերների դերային համապատասխանությունը (մի դրույթ, որը չարձանագրվեց ամուսնալուծված զույգերի հետազոտությունների արդյունքների ամփոփման ժամանակ. ակնհայտ էին բարձր կոնֆլիկտայնությունը, դերերի բախման կիզակետում առաջացած

ախտահարված փոխհարաբերությունները): Համաձայն կատարված հետազոտության տվյալների՝ ***սոցիալ-տնտեսական ոլորտում*** կանանց սպասումները գերազանցում են տղամարդկանց հավակնություններին, քանի որ վերջիններս չեն ցանկանում միանձնյա զբաղվել տնտեսության կառավարմամբ և հոգալ կենցաղային հարմարավետության ապահովման հոգսերը: Ըստ տղամարդկանց՝ այժմյան ընտանիքներում բոլոր դժվարությունները միայնակ հաղթահարելն անհնար է: Կանայք սա դիտարկել են որպես անկարողություն, անգամ՝ թուլակամություն, որն էլ առաջացրել է դերերի և կարծրատիպերի բախում, արդյունքում՝ ճգնաժամեր, անհաղթահարելի խոչընդոտներ: Հետաքրքիր ցուցանիշներ են արձանագրվել ***ծնողական-դաստիարակչական ոլորտում:*** Տղամարդկանց բարձր հավակնությունները բախվել են կանանց ցածր սպասումների հետ և առաջացրել բախում. այս ոլորտում տղամարդու բարձր ներգրավվածությունը կանայք դիտարկել են որպես դերերի չարաշահում և գտել, որ երեխաների դաստիարակության խնդիրները հիմնականում կնոջ մենաշնորհն է, իսկ տղամարդը նյութական բարիքի ապահովողն է: Մինչդեռ ժամանակակից ընտանիքներում տղամարդիկ միտված են երեխաների դաստիարակության հարցում ունենալ առավել մասնակցություն, ինչը նրանցից այնքան էլ չեն սպասում կանայք:

Սոցիալական ակտիվության ոլորտում ակնառու է բախումների տեղատարափը, քանի որ կանանց՝ հասարակության մեջ բարձր դիրք գրավելու հավակնությունները բախվել են տղամարդկանց սպասումներին, որոնք ամբողջանում են կնոջը հիմնականում տան հոգսերը հոգացողի դերում տեսնելով: Այս ոլորտում երկու կողմերի մոտ էլ արձանագրվել է բարձր կոնֆլիկտայնություն, քանի որ տարաձայնությունների հարթման եզրեր գրեթե չեն գտնվել: ***Հուզական-հոգեթերապևտիկ գործառույթի*** իրագործման նկատմամբ կանանց հավակնությունները բախվել են տղամարդկանց սպասումներին. թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ գտնում են, որ իրենց զուգընկերը պետք է կարողանա ընտանիքում ջերմ և հուզառատ մթնոլորտ ապահովել, քանի որ՝ ա) նա տղամարդ է, ուրեմն պարտավոր է ուշադիր և հոգատար լինել կնոջ ապրումների և տրամադրության հանդեպ, բ) նա կին է, ուրեմն պարտավոր է մշտապես հասկանալ և կողակցին ընդունել այնպիսին, ինչպիսին նա կա՝ անկախ սեփական տրամադրությունից, զբաղվածությունից և այլն: ***Արտաքին հրապուրանքի գործառույթի*** իրագործման ժամանակ ևս կանանց և տղամարդկանց սպասումների ցուցանիշները համարժեք չեն եղել, քանի որ կանայք ցանկություն են արտահայտել տղամարդկանց տեսնելու նորաձև և հրապուրիչ, այնինչ տղամարդկանց խմբում կարծիքները բախվել են. այստեղ ևս տղամարդիկ զերծ չեն մնացել կարծրատիպերի ազդեցությունից՝ «կինը պետք է առաջնային համարի ընտանիքի խնդիրները»: Ըստ «Դերային սպասումներ և հավակնություններ մեթոդիկայի» առաջին հինգ ոլորտների հետազոտության՝ բոլոր ընտանիքներում առկա է եղել դերային անհամապատասխանությունը, քանի որ բոլոր ցուցանիշները զրոյից բարձր են: Որքան ցուցանիշը բարձր է, այնքան համապատասխանությունը ցածր է:

Այս ամենը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ մեր կողմից հետազոտված ամուսնալուծված 100 ընտանիքների շրջանում առավել բախումնային, ճգնաժամային և ախտահարված փոխհարաբերություններ դիտարկվել են հատկապես վերոգրյալ հինգ ոլորտներում: «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկայի հաջորդ փուլում մասնակցել են ամուսնությունը պահպանած 50 իգական և 50 արական սեռի ներկայացուցիչներ:

Այսպիսով, «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկայի կիրառման միջոցով մենք հնարավորություն ստացանք հետազոտելու ամուսնա-լուծված զույգերի փոխհարաբերություններում եղած կոնֆլիկտայնության դրսևորումները, ամուսնացած զույգերի մոտ առկա դերային և ներդերային փոխհարաբերությունները և վարքագծային փոփոխությունների դրսևորումները: Վերոգրյալ երկու գործոնների բախման կիզակետում առաջացել են նոր, ախտածին-դեզադապտիվ դերեր (օրինակ՝ զոհի, կամակատարի, ենթակայի, միանձնյա ղեկավարի, «չափազանց սիրող ծնողի» և այլն), որոնք, աստիճանաբար «զարգանալով» և նորովի դրսևորվելով, յուրաքանչյուր նոր կոնֆլիկտի արդյունքում քայքայել են ընտանիքի կառույցը: Գտնում ենք, որ ախտածին դերային փոխհարաբերությունները կարելի էր հաղթահարել, եթե արդեն նախկին ամուսինները առավել ճկուն դերային հայեցակարգ մշակեին սեփական վարքագծում, փորձեին առաջնորդվել ոչ միայն սեփական, այլև երկուստեք կարևոր շահերով: Ամուսնությունը և ընտանիքը պահպանած զույգերը ևս զերծ չէին դերային բախումներից և ախտածնության ակնառու դրսևորումներից, սակայն, համեմատելով ամուսնալուծված զույգերի դերային և միջանձնային փոխհարաբերություններում առկա վարքականոնների հետ, բացահայտեցինք այն հանգամանքը, ըստ որի՝ նրանք կարողացել էին ճգնաժամային իրավիճակները հարթել երկուստեք զիջումների (շատ հաճախ՝ ոչ կամովին) միջոցով: Սա ևս ախտածին դերի դրսևորման մասին է վկայում, սակայն այս դեպքում խոսել է թեկուզև արդեն հնացած, սակայն այժմ էլ գործածելի «Ամոթ է, բա ինչ կասեն....» ախտածին դերային կարգախոսը:

Փաստորեն այս խմբում մենք բացահայտեցինք այնպիսի ընտանիքներ, որոնք զգացմունքային-հուզական ամուսնալուծության մեջ էին գտնվում, սակայն, օտար աչքին ոչ տեսանելի, «ամուր» պահպանում էին ընտանիքը: Եվ, այնուամենայնիվ, դժվար է ասել՝ դրակա՞ն, թե՞ բացասական միտում է վերոգրյալ երևույթը և ի՞նչ ազդեցություն է թողնում այն թե՛ զույգերի, թե՛ ընտանիքի մյուս անդամների, հատկապես երեխաների վրա: Երրորդ գլխի 3.3 ենթավերնագիրը նվիրված է առողջ և ամուսնալուծված ընտանիքների կոնֆլիկտային վարքի գործոնների հետազոտմանը, ախտածին դերերի ազդեցության դրսևորմանը Կ. Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշումը» մեթոդիկայի կիրառմամբ: Մեզ հետաքրքրում էր այն, թե կանանց և տղամարդկանց միջև կոնֆլիկտների առաջացման և սրման ընթացքում վարքի ինչ նոր մեխանիզմներ են առաջանում, ինչպես են նրանք փորձում հաղթահարել ստեղծված իրավիճակը և արդյո՞ք լուծման տարբերակը չի ծնում նոր ախտածին դեր, հետևաբար և նոր կոնֆլիկտ:



Գծապատկեր 1. Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության քանակական ցուցանիշներն ամուսնացած կանանց և տղամարդկանց մոտ

Այսպիսով, ի մի բերելով վերոգրյալը, փաստենք, որ ամուսնալուծված ընտանիքներում ակնառու էին դրսևորված կոնֆլիկտայնության բարձր մակարդակն ու հարմարման անընկալունակության դրսևորումները, որոնք առաջացրել էին դերերի բախում և լարված փոխհարաբերություններ, ճգնաժամային իրավիճակներ, նոր-դեզադապտիվ ախտածին դերերի դրսևորումներ, և որոնց արդյունքում էլ աստիճանաբար տրոհվել էր ընտանիքը, որը, ինքնին, ցավոտ փաստ է: Լիակատար ներդաշնակություն չարձանագրվեց նաև ընտանիքը պահպանած զույգերի շրջանում, սակայն կոնֆլիկտայնության միջին և միջինից ցածր մակարդակը նրանց հնարավորություն էր ընձեռել լսել մեկմեկու, ընդունել մեկ որոշում անգամ այն դեպքերում, երբ կողմերից մեկը համաձայն չէ: Ամուսնալուծված և ամուսնությունը պահպանած ընտանիքների կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության տարբերությունների գիտական հավաստման համար կիրառել ենք Խի-քառակուսու չափանիշը: Ստորև ներկայացնում ենք հաշվարկման բանաձևերը:

$$\chi^2 = \sum_{i=1}^{k-1} \frac{(f_e - f_t)^2}{f_t}$$, էմպիրիկ և տեսական հաճախականություններ

$$f_{ij} = \frac{f_i \cdot f_j}{N}$$, $f_i\ f_j$ i-րդ և j-րդ հաճախականություններ

df=16 ազատության աստիճանի դեպքում p<0,001 հավանականությամբ աղյուսակային արժեքը 39,26 է, իսկ մեր կողմից ստացված ցուցանիշը՝ χ^2 = 49,92: Կարող ենք հավաստել, որ երկու խմբերի համար տարբերությունն առկա է: Երրորդ գլխի 3.4 ենթավերնագրում նկարագրվում է ախտածին դերերի քայքայիչ ազդեցության գործոնների հետազոտումը առողջ և ամուսնալուծված

ընտանիքներում՝ Վ.Վ. Ստոլինի ամուսնությամբ բավարարվածության մեթոդիկայի կիրառմամբ:

Երրորդ գլխի 3.5 ենթավերնագրում հետազոտված է առողջ և ամուսնալուծված ընտանիքներում մեծացող երեխաների պատկերացումները ընտանիքի և ընտանեկան դերային փոխհարաբերությունների մասին «Ընտանիքի կինետիկ պատկերը» (Ռ. Բեռնս և Ն. Կաուֆման) և «Անավարտ նախադասություններ» մեթոդիկաների կիրառմամբ: Մեթոդիկաները կիրառվել են շուրջ 140 աշակերտների շրջանում:



Նկար 1. «Ընտանիքի կինետիկ պատկերը» մեթոդիկայի թվային արդյունքները՝ ըստ ամուսնությունը պահպանած ընտանիքների երեխաների հետազոտության



Նկար 2. «Ընտանիքի կինետիկ պատկերը» մեթոդիկայի թվային արդյունքները՝ ըստ ամուսնալուծված ընտանիքների երեխաների հետազոտության

«Միջանձնային հարաբերությունների ախտորոշումը անավարտ նախադասությունների միջոցով» մեթոդիկայի կիրառմամբ ստացել ենք հետևյալ արդյունքները. փաստենք, որ առողջ ընտանիքներում ապրող աշակերտների զգալի մասը կայուն պատկերացումներ ունի ներընտանեկան հարաբերությունների ներդաշնակության, դերերի ճիշտ տեղաբաշխման («մոր» դեր, «հոր» դեր և այլն), ընտանիքում դրական հույզերի արտահայտվածության և ընտանիքի անդամների փոխկապվածության մասին: Սակայն, ականատես եղանք և այն փաստին, որ նույն՝ առողջ ընտանիքներում բնակվող աշակերտների որոշ մասն էլ կայուն պատկերացումներ չուներ ընտանիքի, ընտանեկան փոխհարաբերությունների, դերերի ներդաշնակության մասին: Սա վկայում է այն մասին, որ վերոնշյալ ընտանիքներում կամ առկա են ախտահարված ներքին կամ արտաքնապես դրսևորվող փոխհարաբերություններ կամ, այսպես կոչված, «լղոզված» դերեր (հոր կամ մոր դերի ոչ ճշգրիտ դրսևորում), որոնք երեխաներն այնքան էլ լավ չեն ընկալում (ախտածնության դրսևորում երկու սերունդների միջև): Ամուսնալուծված ընտանիքների երեխաների զգալի մասի շրջանում, ինչպես և սպասում էինք, արձանագրվեց բարձր կոնֆլիկտայնություն և տագնապայնություն, որը բնորոշ է դերային աններդաշնակությամբ, լարված, բախումնային ընտանիքներին և, ըստ այդմ էլ, նրանցում մեծացող երեխաներին: «Միջանձնային հարաբերությունների աշտորոշումը անավարտ նախադասաոջթյունների միջոցով» մեթոդիկայի կիրառմամբ ստացել ենք հետևյալ արդյունքները.

Աղյուսակ 3

Վիճակագրական վերլուծություն՝ ըստ խի-քառակուսի չափանիշի (p<0,05)

Վերաբերմունքը ընտանիքին	10,415
Վերաբերմունքը տղամարդկանց/կանանց	12,544
Վերաբերմունքն իր նկատմամբ	1,399
Կյանքի նպատակները	9,558
Վերաբերմունքը հոր նկատմամբ	12,568
Վերաբերմունքը մոր նկատմամաբ	1,792
Վերաբերմունքը ընկերների և ծանոթների նկատմամբ	0,020

χ^2 հաշվարկային արդյունքները ամուսնալուծված և ամուսնությունը պահպանած ընտանիքների երեխաների խմբերի համար ներկայացվում է աղյուսակում: df=4 ազատության աստիճանի դեպքում p<0,05 հավանականությամբ աղյուսակային արժեքը 9.49 է: Կարող ենք հավաստել, որ տարբերությունն առկա է վերաբերմունքի 4 ձևերում, որը նաև ցույց են տալիս վերոնշյալ երկու խմբերի վերաբերմունքի ձևերում առկա էական տարբերությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներընտանեկան դերային համակարգի և, մասնավորապես, ախտածին-դեզադապտիվ դերերի ու դրանց քայքայիչ ազդեցության մասին մեր հետազոտությունը թույլ է տալիս կատարել ստորև բերվող եզրահանգումները:

1) Յուրաքանչյուր նոր ստեղծվող ընտանիք կարգավիճակների և դերերի համակարգ է, որի սպասումները (էքսպեկտացիաները) փոխկապակցված են և վերջիններիս չարդարացվելու կամ մասնակիորեն արդարացվելու պարագայում դրսևորվում են նոր՝ ախտածին-դեզադապտիվ դերեր, որոնք փոխում են ընտանիքի կառույցը: Հետևաբար ներընտանեկան հարաբերություններում գոյություն ունեն դերային բախումների և, հետևաբար, կոնֆլիկտների «զարգացման» փուլեր, որոնք պայմանավորված են ախտածին դերերի և սպասումների հակասությամբ, ստեղծում են լարված փոխհարաբերություններ և ճգնաժամեր, որոնք էլ իրենց հերթին արտահայտվում են ինչպես ամուսինների, այնպես էլ ողջ ընտանեկան հարաբերությունների մակարդակում:

2) Ախտածին-դեզադապտիվ դերերի կիզակետում դրսևորվող բախումնածին, ճգնաժամային փոխհարաբերությունները մեծամասամբ հետևանք են ընտանեկան դերերի նորմալ-ադապտիվ կերպի ընդունման անկարողության և փոխընդունման բացակայության: Վերոգրյալի արդյունքում ախտածին-դեզադապտիվ դերերի ճնշմամբ ընտանիքը կազմալուծվում, քայքայվում է: Սա վկայում է այն մասին, որ դերերի փաստացի փոխընդունման կարողությունը ամուսինների և ընտանիքի մյուս անդամների փոխադարձ հարմարման գլխավոր պայմանն է:

3) Ընտանեկան ճգնաժամային փոխհարաբերություններում առաջացող ախտածին-դեզադապտիվ դերերը երևան գալով ընտանիքի մեկ կամ մի քանի անդամների վարքագծում, սկսում են աստիճանաբար ներգործել մյուսների վրա և քայքայելով՝ կազմալուծել ընտանիքը: Այս պարագայում ուշադրության է արժանի հատկապես երեխաների կարգավիճակադերային փոխհարաբերությունների ակնհայտ փոփոխականության դրսևորումը և որոշակի վարքականոնների ուղղակի խեղման դեպքերը: Նման երեխաներից շատերը ուղղակիորեն կորցնում են հետագայում նորմալ ընտանիք կազմելու կամ ամուսնական փոխհարաբերություններում հարմարվելու ունակու թյունը, ձգտում են միայնակության:

4) Արդեն ամուսնալուծված ընտանիքի անդամները շատ հաճախ ախտահարված դերային փոխհարաբերությունների թատերաբեմ են դարձնում նաև հասարակության այսպես կոչված արտաքին հատվածը՝ իրենց անմիջական շրջապատը, դրսևորելով հարմարման անկարողություն, երբեմն՝ անընկալություն: Ըստ այդմ էլ ընտանեկան խնդիրների, առաջացած և առաջացող խնդրահարույց, լարված փոխհարաբերությունների, ախտածին դեզադապտիվ դերերի և ախտահարված հարաբերությունների հիմնական պատճառը սեփական դերի ոչ ճիշտ, հաճախ՝ «ուռճացված», «գերազանցված» պատկերացումն է՝ դիմացինի նսեմացման կամ ստորադասման հաշվին:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ տպագիր աշխատանքներում:

1. Մուրադյան Ա. Ռ., Անբարենպաստ ընտանիքները՝ որպես դեռահասների վարքի «ռիսկայնության» նախապայման: «Հոգեբանությունը և կյանքը» հանդես, «Զանգակ-97» հրատ., թիվ 1-2, 2010թ., էջ 23-26:

2. Մուրադյան Ա. Ռ., Սեդրակյան Ս. Ա., Դերային բախումները և դերային մրցակցության դրսևորումները ներընտանեկան փոխհարաբերություններում: «Հոգեբանությունը և կյանքը» հանդես, «Զանգակ-97» հրատ., թիվ 1-2, 2011թ., էջ 75-80:

3. Մուրադյան Ա. Ռ., Ընտանիքը՝ որպես սոցիալ-հոգեբանական հետազոտման առարկա: «Հոգեբանությունը և կյանքը» հանդես, «Զանգակ-97» հրատ., թիվ 3-4, 2011թ., էջ 163-166:

4. Մուրադյան Ա. Ռ., Ախտածին դերերի առաջացման, դրսևորման և ազդեցության մեխանիզմների հետազոտական վերլուծություն: «Մանկավարժական միտք» հանդես, «Զանգակ» հրատ., թիվ 3-4, 2014թ., էջ 278-283:

5. Մուրադյան Ա. Ռ., Ընտանեկան ախտածին դերերի ազդեցությունը ներընտանեկան հարաբերությունների վրա. հիմնախնդրի սոցիալ-հոգեբանական մեկնաբանություններ: Նյութեր «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» V միջազգային գիտաժողովի: ԵՊՀ, Երևան, Հայաստան 2015թ., էջ 221-225:

6. Մուրադյան Ա. Ռ., «Ընտանիքի կինետիկ պատկերը» և «Անավարտ նախադասություններ» մեթոդիկաները որպես ընտանիքում միջանձնային հարաբերությունների ախտորոշման միջոց: «Մանկավարժական միտք» հանդես, «Զանգակ» հրատ., թիվ 1-2, 2016թ., էջ 126-133:

МУРАДЯН АРМИНЕ РАФИКОВНА

ВЛИЯНИЕ ПАТОГЕННЫХ РОЛЕЙ НА ВНУТРИСЕМЕЙНЫЕ ВЗАИМООТНОШЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03 "Социальная психология (межличностные отношения, семейная, возрастная, педагогическая, групповая деятельность)".

Защита диссертации состоится 7-ого марта 2017 года в 12:00 на заседании специализированного совета психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском Государственном Университете им. Х. Абовяна, по адресу: Ереван, 0010, ул. Тигран Мец 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: обусловлена социально-ролевым построением семьи как своеобразной общественной структуры: в частности статусно-ролевых взаимоотношений исследования, что в свою очередь предпологает новые и более подробные подходы к семейно-ролевым взаимоотношениям.

Цель исследования: Раскрыть социально-ролевую структуру семьи и динамику патогенных ролевых взаимоотношений семейные конфликты, разводы и их последствия.

Основные задачи исследования:

1. На основе результатов теоретических и практических исследования семьи, использованием теории ролей представить структуру современной семьи, ее динамику и функции, описать патогенные проявления ролей как причину развода и разрушения семьи.

2. Систематизировать роли образовавшися на основе особенных патогенных сталкновений, особенноцти их проявления и возможные методы решения. Исходя из етой цели использовать различные методы: беседу, наблюдения, опрос, тестирование и другие социально-психологические методы а так же провести образовавшихся в психологии теоретико-методических материалов.

3.Исследовать основные причины развода и механизмы его возникновения, в частности развод рассматривать как явление которое возникло под воздействием патогенно-дезадаптивных ролей.

4.Расскрить те механизмы, в результате которых новые ролевые взаимоотношения несут в себе адаптивный-нормальный и дезадаптивный-патогенный характер.

Гипотеза исследования: Предполагается, что каждая образовавшаяся семья - ето система статусов и ролей, ожидания которых (експектаций) взаимосвязаны и при условии неоправданных или частично оправданных ожидании могут провляться новые патогенно-дезадаптированные роли, которые

меняют структуру семьи, разлагают ее.

Научная новизна исследования: В диссертации представляется новый взгляд на социально-ролевые, в частности статусно-ролевые подходы семьи, которые направлены на изучения патогенно-дезадаптивных ролевых язаимоотношений, а также вытекающих из них проблем, функций и дальнейших взаимоотношений. дальнейшие патогенные взаимоотношения, по гипотезе диссертации, расматриваются как фактическое или эмоциональное расторжение брака, тоесть развод. Исходя из вышесказанного с нашей стороны были органозовани и проведены методические, теоретические и экспериментальные исследования динамики внутресемейных взаимоотношений. В данной работе ролевой, в частности патогенно-ролевой подход пополняется гипотезой, под гипотезами, которыми по сути дается начало исследованиэ новых патогенных-социально психологических направлении.

Теоретическая и практическая значимость исследования:

Психологические исследование семьи, в частности исследования основных причин расторжения брака и разводов систематически обсуждается с точки зрения социально-ролевых (патогенно-ролевых) взаимоотношении, где роль здоровой семьи или роль патогенной семьи рассматриваэтся как важнейшие факторы семейной деятельности. Исследования сделанние в етой отрасли позволяэт по новому осветить основные проблемы с которыми сталкиваются современные семьи и открывают широкий спектор психологических теоретияеских и практических исследовании в сфере семейной психологии.

Достоверность результатов: исследования обеспечена выбором методов соответствуюших целям основной проблемы. Выводы работы получены на основе математического анализа результатов исследования и их статистической обработки.

Апробация и внедрение исследования: научно-практические положения работы были представлены в виде докладов и публикаций. Материалы и результаты исследования обсуждались на педагогических и родительских советах школ сель Норакерт, Мусалер, Цахкаландж и Паракарской основной школы Армавирского марза, на ежемесячных теоретических семинарах кафедры психологии университета “Урарту”, на собраниях “Совета Женщин” города Эчмиадзина, на педагогических и родительских советах 2-ой специализированной школы города Еревана. Результаты исследования работы могут исползоваться в исследованиях семейных психологов и психотерапевтов, в исследованиях социально-психологических аналитических центров, в соответствующих вузовских программах.

Структура работы: диссертация состоит из введения, трех глав, заключения деловых предложений и списка литературы (96 источников). Обьем работы составляет 144 страницы, включая 5 приложений (14 страниц), 5 схем, 2 рисунка и 11 таблиц.

По теме диссертации опубликовано 6 статьей.

MURADYAN ARMINE RAFIK

THE IMPACT OF PATHOGENIC ROLES ON INTRAFAMILY RELATIONSHIP

Thesis for a degree of Psychological Sciences, Specialty 19.00.03 "Social Psychology (interpersonal relationships, family, age-related, pedagogical group activities)".

The defense of the thesis will take place on 7 March, 2017, at 12:00, at the meeting of the Special Board of Psychology 064 HAC awarding degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Address: 17 Tigran Mets avenue, Yerevan 0010.

SUMMARY

The actuality of the research is about the family as a specific social structure with its social and role relations, in particular, the status and role relationship, which in its turn implies the development of new and more detailed approaches and concept of family role relations.

Research Objectives

The structure and dynamics of social and role family relations, pathogenic role relationship, family conflicts, divorces and their consequences.

Main Goals

1. Based on the outcome of theoretical and practical family research and with the application of role theory present the structure, functions and dynamics of the modern cell family, describe the pathogenic role manifestations as a cause of divorce – destruction of family.
2. Coordinate the conflicts evolved on the basis of specific pathogenic role, the specificities of the manifestation thereof and possible ways of solution. To this end apply conversation, observation, survey, tests and other socio-psychological methods, as well as conduct theoretical and methodological analysis of experimental materials accumulated in psychology.
3. Study the main causes of divorce and mechanisms of evolving thereof, in particular regard the divorce from the perspective of pressing the pathogenic and maladjusted roles.
4. Reveal the mechanisms which result in new role relationship, which is of adaptive (normal) and maladjusted (pathogenic) nature.

The Hypothesis of the Research

It is assumed that each and every established family is a system of status and roles, whose expectations are interlinked, and in case the latter do not come true or come true partially new pathogenic-maladjusted roles might be manifested, which change the structure of the family and destroy it.

Scientific Novelty

The afore-mentioned problems are studied under the conditions of applying

social and role approach, in particular that of status and role approach, which is aimed at the study of pathogenic-maladjusted role relations which are the cornerstone of work and spheres of influence, as well as the study of family, its problems, functions and future relations. We consider the solution of the future changed relations from the perspective of the factual or emotional destruction of the family, namely leading to divorce. In this paper the conflictogenic family mechanisms and functions conditioned by pathogenic role relationship are considered to be the most topical ones in the science studying family groups. Stemming from the aforementioned we had organised and conducted methodological, theoretical and experimental research of the intra-family relationship dynamics.

Theoretical and Practical Significance

The psychological family research, in particular study of the basic reasons of the destruction of family (divorce) are discussed in a systemic way from the socio-role perspective (conditioned by pathogenic roles), where the implementation of family roles or the inability to implement them is regarded as the most important component of family activity. The research conducted in this area allows to shed a new light on the problems facing contemporary families and opens up broad prospects for the theoretical and practical research of family psychology.

Credibility of Results

This has been safeguarded by the selection of methods in conformity with the goal, development of research data and methods of mathematical statistics of analysis.

Approbation and Adoption of Research Results

The main provisions of the research were introduced at the meetings of the pedagogical and parents' councils of the Norakert, Musaler, Tsaghkalanj secondary and Parakar basic schools of the Armavir region in the form of reports and discussions, as well as at the monthly seminars of the Urartu university chair of psychology, conferences of the Echmiadzin city women's council, meetings of the Yerevan city number 2 special school's pedagogical and parents' councils.

The research data might be applied in the studies of specialists of family psychology and psychotherapy, centers for socio-psychological consultation and respective university courses.

Work Structure

The thesis consists of an introduction, three chapters, conclusions, practical proposals and literature (96 titles). The volume of the thesis is 144 computer pages, including 5 diagrams, 2 pictures and 11 tables. The thesis includes 5 appendices (14 pages).

Six articles have been published on the subject of the thesis.